




Տարեկան գինը 10 բուլբուլ, կես տարվանը 6 բուլբուլ,
Առանձին համարները 5 կոպեկով:
Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ:
Մեր հասցեն. Тифлисъ, редакция «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տ է Լ է Ֆ օ Ն № 253.

Պարագրաֆները բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն):
Յայտարարութիւնները ընդունուում է ամեն լեզուով:
Յայտարարութիւնները համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպեկ:
Տ է Լ է Ֆ օ Ն № 253.

Հ Ի Մ Ն Ա Դ Ի Բ Գ Ի Դ Գ Ո Ր Ա Ր Ծ Ո Ւ Ն Ի

ԲՈՎԱՆՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Վերջին տեղեկութիւնները.—ՆԵՐՔԻՆ ՏԵ-
ՍՈՒԹԻՒՆ. Նախընտանի ղեկավարը. Բաթումի
կառնիքը. Հայ կիւնը և հայ լեզուն. Թատրոն
և երաժշտութիւն. Նամակ Նոր-Բայազետի.
Նամակ Արդուինի. Նամակ Շուշուի. Նամակ
Գանձակի գաւառի. Ներքին լուրեր.—ԱՐՏԱ-
ՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Պատերազմի շուրջը. Պար-
սից Շահի ճանապարհորդութիւնը.—ՀԵՐԱ-
ԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

ՎԵՐՋԻՆ ՏԵՆԵԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

Նախընտանից ստացված հեռագրերը
ցոյց են տալիս, որ քաղաքում յուզ-
մունքները փոքր է շատ է թուլացել են.
Իսկ գիւղական շրջաններում դեռ շարու-
նակ վում են, արտայայտվելով սպանու-
թիւններով և կողոպուտներով:

Քաղաքում, ուր գործի թիւը շատ է
և կան բազմաթիւ պաշտօնական անձեր,
սպանութիւնները աւելի է, բայց դեռ
վատանում են չը կայ, որ տեղի չեն ու-
նենայ ընդհարումներ: Թէ հոգեւորական
ներկայացուցիչները և թէ հասարակու-
թեան ազդեցիկ մարդիկ յորդորում են
խուսափել ամեն տեսակ աղբիւրներից, ո-
րոնք կարող են թուրքացութիւններ ա-
ռաջացնել: Բայց քաղաքացիները դեռ ա-
նաբեկված վիճակի մէջ են, շուկան փակ
է և սովորական կեանքը չէ վերականգնել:

Գիւղերի մի մասում նոյնպէս փոքր
ինչ խաղաղվել են մտքերը. իսկ խուլ
անլիւններում դեռ շարունակվում են
տխուր իրողութիւններ, սարսափելի տրա-
մադրութիւն: Գողթի մասում զգալի
կերպով փախել է հայաբնակ Փառակա
գիւղը: Ագուլիսի շրջակայքում սկսվել է
հրացանաձգութիւն, բայց տխուր ղեկավար
տեղի չեն ունեցել: Օրդուբադում, ուր
կենտրոնացած է գաւառամասի վարչա-
կան մարմինը, միջոցներ են ձեռք առն-
ված թէ զսպելու տեղական մահմեդական
տարրեր, որ կազմում է ազգաբնակու-
թեան մեծամասնութիւնը և թէ արգելք
լինելու Արաքսի ափերից սպանացող
արաւաններին:

Թիֆլիսի ոստիկանութիւնը երէկվանից
եռանդուն միջոցներ է ձեռք գրելել
քաղաքի զանազան մասերում ունենալու
բաւականաչափ թուով պահապաններ:
Թէ և Թիֆլիս քաղաքի վերաբերութեամբ
անկարելի է կասկածել, որ կը խանգար-
վի խաղաղութիւնը, բայց և այնպէս
անհեռաբարկված նախազգուշութիւնները նը-
պատակադարձ են, որովհետեւ հասա-
պակութեան մէջ զանազան անհանգստաց-
նող լուրեր են պտտում և վրդովմունք
են առաջացնում մարդկանց մէջ: Յոյս
կայ, որ Թիֆլիսը կատարելապէս ազատ
կը մնայ որ և է պատահանքներից:

Երէկ արաքսից հիւպատոսի օգնականը
այսինքն Թիֆլիսի թեմական առաջնորդ
Գ. Եպ. Սաթրուկեանցին և յայտնեց, որ
Թիֆլիսի մահմեդականների մէջ ոչ մի
կասկածելի յուզմունքներ և շարժումներ
չը կան հայերի դէմ և տարածված լու-
րերը հիւսիս չունեն իրականութեան մէջ:
Ուստի նա խնդրում է, որ հայերը հան-
գիստ կերպով նայեն իրանց զբաղեցրելի
վրա առանց որ և է կասկածի:

Առաջնորդը իր կողմից յայտնեց, որ
հայերը միշտ խուսափել են և խուսա-
փում են թշնամական քայլերից և միայն
մի ցանկութիւն ունենան, որ թուրքերը
կատարեալ հաւատ ունեն, որ հայերը ոչ
մի ընդհարում չեն առաջացնել:

Գանձակի հասարակութեան պատկա-
նող բազմաթիւ անձինք, ցանկանալով,
որ Գանձակում տիրող խաղաղութիւնը և
համերաշխութիւնը չը խանգարվի անս-
տոյգ, կեղծ, չափազանցած և անկայալ

տեղեկանքի ոչ նկատողութիւններից, կազ-
մել են մի թուղթ, որով խնդրում են
պարբերական մամուլի օրգաններից որոշ
զգուշաւորութեամբ վերաբերվել լուրերի
աղբիւրներին:

Մենք ևս ցանկանում ենք, որ լուրեր
հաղորդողները, հարազատ մնալով ճշմար-
տութեան ձայնին և աչքի առնելով ամեն
մի կեղծ և անվստահ լուրի վատ ազդե-
ցութիւնը, ջանք գործ դնեն, որ նրանց
հաղորդածները լինեն ստուգված և կըշու-
ված: Սուտ և սխալ լուրերը մեզ շատ
են վնասել անցեալում և նրանց միջոցով
ստեղծվել են տխուր թիւրիմացութիւն-
ներ, որոնք ունեցել են ծանր հետևանքներ:
Անա Գանձակի յայտարարութեան բո-
վանդակութիւնը:

Բազում 6—9 փետրվարին տեղի ունեցած
ղեկավարի ժամանակ ինչպէս կողմանաւ նոյն-
պէս և միւս լրագրողներում այդ եղելութիւն-
ների մասին եղած հեռագրերը և լուրերը
կրում էին տեղեկանքի ճշմարտութիւն, որ
կայալայտ նպատակ ունէր գրգռել վատ կըքեր,
ներկայացնելով թէ մէկ թէ միւս կողմը մե-
ղաւոր: Այդպիսի գրգռող լուրեր երկացին Բա-
զուից, Երևանից յայտնի ղեկավարից յետոյ,
այժմ նրանք դադար են նախընտանից: Արտա-
յայտելով մեր ցատուքը այն անձանց, որոնք
նախամտածված տարածում են այդպիսի լու-
րեր, մենք խոնարհաբար խնդրում ենք լրա-
գրողներին չը տպադրել չը ստուգված գրգռիչ
լուրեր, թէ Նախընտանի և թէ ուրիշ տեղերից:

Գանձակի յայտարարութիւնը բերին
մեր խմբագրատունն այնտեղից եկած երեք
լրագրողներ հայ Յովսէփ Լազարեան,
թուրք Նախրեէզ Իւարիզով և վրացի
Միխայիլ Կանչելի:

Այդ յայտարարութիւնն ստորագրողներն
էլ պատկանում են երեք ազգաբնակու-
թեան ներկայացուցիչներին:

Պէտք է նկատել, որ Գանձակում քրիս-
տոնեաների և մահմեդականների մէջ
միջակայքը այժմ պահպանվել է խաղաղութիւ-
նը և ամեն միջոցներ են գործ դրվում
չը խախտելու նրան:

Մենք կարող ենք միայն ուշուցել զան-
ձակեցիկների այդ համակրելի ջանքերը:

Հին-Նախընտանից, մայիսի 17-ին, 4 ժամ
20 րոպէին կէսօրից յետոյ երդուեալ հաւա-
տարմասաբ Սամսոն Յարութիւնեանց ստա-
ցել է հեռեւալ հեռագիրը:

Այսօր շէյխուլիսլամի և ժողովրդի ներ-
կայացուցիչներին հետ միասին հանդիսա-
ւոր թափօր կատարեցինք քաղաքում: Մի
փոքր հանգստացրինք ժողովուրդը, սա-
կայն երկիւղալի դրութիւնը դաւառում
շարունակվում է: Թախանձանքով խնդ-
րում են հնարաւոր դարձրէք զալ Նախը-
նտանի ուրիշ անձանց հետ միասին, որոնք
կարողանային ծառայութիւն մատուցանել
ժողովրդին ծանր հանգամանքներում:

Կարապետ վարդապետ

Ուլուխանու-Ջուլֆայի երկաթուղու շինող
ինժեներ Վուրջէլը մեկնեց Ուլուխանու, որ-
պէս զի տեղի վրա հոգայ անկարգութեան
վայրն աւելի արագութեամբ զօրք և ուսե-
լեքի պաշար փոխադրելու գործը:

Նախընտանից հեռագրում են «Է.Ն.»-ին.
«Ագուլիսի շրջակայ գիւղերում կողոպուտ են
Կարմիր վանք մենաստանը: Մայիսի 14-ին
նահանգապետը պահանջել է կրկին երկու
բաւարիս հետեւել, երեք հարկերով կաշակ
և թնդանութիւն: Նախընտանի տեղական
մարդ կործանված է. սպանում է սով:
Բանուրները կապաւառու Նալբանդեանի և
Դանիէլեանի համար, Ուլուխանու-Ջուլֆա
գծի շինութեան գործում, հաց թխում է Եֆ-
րեմովը գծի վրա, բայց այդ հացը տեղ հասց-
նելը կցված է մեծամեծ դժուարութիւնների
հետ»:

Ուլուխանուից պատահաբար հեռագրում են
«Է.Ն.»-ին մայիսի 15-ից. «Նստած եմ Ու-
լուխանու կայարանում բժշկական խմբով:
Անհնար է Նախընտանի անցնել: Շրջակայ գիւ-
ղերում հրդեհներ են: Բազմաթիւ սպանված-
ներ և վիրաւորներ կան: Կամաւոր սանիթա-
րակաճ խմբի կառավարիչ բժիշկ Տեր-Սահա-
կեան»:

Նախընտանից հեռագրում են «Է.Ն.»-ին
մայիսի 15-ից. «Մինչև փոխ-նահանգապետի
ժամանելը հայերը մի քանի օր շարունակ չէին
բաց անում իրանց խանութները, վախենալով
թուրքերի կողմից յարձակումից: Նախընտանի
քաղաքային աւագ Բահիմ խան Նախընտանի
և ուրիշ ազդեցիկ թուրքեր համոզեցին հայե-
րին, որ բոլոր նախազգուշական միջոցները
ձեռք են առնված, վերջապէս հայերը մայիսի
12-ին բաց արին խանութները: Այն ժամա-
նակ թուրք ազգաբնակիչները, մի վայրկեա-
նում, բերդաններով, ատրճանակներով ու խէն-
ջարներով յարձակեցին նրանց վրա, և բոլոր
հայերը, որոնք քաղաքում էին, զարհուրելի
տանջանքներով ընկան: Մի քանիսին կեն-
դանի-կէտաւորի այրեցին, ինչպէս Կա-
րապետ Սալամեանին, Խալիլեանին և
ուրիշներին: Բոլոր հայերի խանութները
մաքաւաթ թալանեցին: Նոյնպիսի վիճակի
են ենթարկվում և բոլոր հայ գիւղե-
րը: Մահից ազատվածները մնացել են անա-
պատան և ապրուստի միջոցից զուրկ: Վնաս-
ները մի քանի միլիոնի են համարում»:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱԽԵՂԵՆԱՆԻ ԴԵՊՅԵՐԸ
(Պաշտօնական)

Նախընտանի քաղաքի և գաւառի դրութեան
մասին հետեւեալ տեղեկութիւններն են ստաց-
վել: Ջօրքերի գաղով մայիսի 14-ի ցերեկը և
լոյս 14-ի գիշերը համեմատաբար խաղաղ ան-
ցան քաղաքում, թէ և ազգաբնակիչներն ա-
ռաջվայ նման խիստ յուզմունքներ մէջ էր գտն-
վում. իսկ շրջակայ գիւղերում դեռ շարունակ-
վում են կողոպուտներ և հրձգութիւններ, նը-
կատվում է ուսուլիքի պաշարի լրակատար
բացակայութիւն և ընդհանրապէս դրութիւնը
շարունակում է շատ լուրջ լինել: Յերեկով
կրակի տրվեց Թաթուլ գիւղը, որի ժամանակ
փչացաւ մօտ 40 մարդ: Եւրմիջինները թողել
են գիւղը, փախել: Թուրքերի կողոպուտը
այնտեղ դադարեցնելու համար, զնաց Նախը-
նտանի գաւառապետը: Երեկոյան յուզիչ լու-
րեր ստացվեցին Ղամալու գիւղից (Երևանի
գաւառ), որի պատճառով այնտեղ գնաց Երե-
ւանի գաւառապետը, որին և աղողից հանգս-
տացնել յուզումը: Մայիսի 16-ին Նախընտան
ժամանած շէյխուլիսլամ Երևանի հայոց
թեմակալին հետ միասին դուրս եկան գաւառը:
Քիւրդերն անցել են Պարսկաստանից և տեղա-
ցի մահմեդականների հետ միասին սպանում
են երկաթուղուն և Շահթախտի մաքաւառը,
Շարուրի գիւղերից մէկի տաւարը ջրեցին տա-
րան և պօստի ճանապարհին սպանեցին մի
գիւղական զբաղքի: Պրիստաւը և ստորափոխի-
կները ցրեցին ամբարը, իսկ Շարուր ուղար-
կեցին մի վաշտ զօրք: Յետոյ լուր ստացվեց,
որ քիւրդեր են երկացել Սաղաւաթի մօտ,
զբա համար էլ Ղամալուից Երևան վերա-
դարձած գաւառապետին այնտեղ ուղարկեցին:

Որովհետեւ լուր է տարածվել, որ Ջուլֆայի
մաքաւառով անցել են 160 հոգի քիւրդեր
և դեռ սպառնում են 300 հոգի Ղարադա-
ղուկից, որոնք դիմում են դէպի Բօրչալուի
գաւառը: Երևանի փոխ-նահանգապետին յանձն-
ված է, որ ստուգէ, թէ արդեօք դա սովորա-
բական բանուր քիւրդեր չ'են, որ մեր սահ-
մանները գալիս են աշխատանք որոնելու:
(ԷԱԲԱՅԵ)

ԲԱԹՈՒՄԻ ԿԵՆՏՐՈՆ

Տեղի վաճառականները 450 ստորագրու-
թեամբ մի խնդր են ներկայացրել քաղաքա-

գիւղին, որպէս զի այս վերջինը թոյլաւորութիւն
վերցնէ նահանգապետից հաւաքվելու քաղա-
քային տան դահլիճում և խորհրդակցելու տի-
րոջ պայմաններին առիթով, որ այնքան ծանր
հետեւանքներ ունեն առևտուրի անկման վրա:

Անշուշտ, ներկայ ճգնաժամի պատճառներից
մէկն է գործարանների մէկը միւսի հետից
փակվելը: Մնում են համարեա Մանթաշեանի
երկու գործարանները, որոնք պէտք է կար-
ծել, եթէ երկրի դրութիւնը այսպէս շարու-
նակվի, ուրիշները նման նոյնպէս կը փակվեն:
Այդ իսկ պատճառով, տեղիս գործարանի կա-
ռավարչներից, շոգնաւաշին ընկերութիւն-
ների ներկայացուցիչներից և տեղական աչքի
ընկնող վաճառականներից կազմված է մի նա-
խապատրաստական մասնաժողով, որ պէտք է
զբաղվի տէրերի և բանուրների իրար հետ
ունեցած յարաբերութիւնները բարւոքելով և
ընդհանրապէս պարզելով այն պատճառները,
որ արգելք են հանդիսանում առևտուրի և ար-
դիւնաբերութեան կանոնաւոր ընթացքին և
նրանց զարգացմանը: Մասնաժողովը իր առա-
ջին նիստը ունի այսօր, ամսիս 13-ին: Շատ
ցանկալի էր, ի հարկէ, որ մասնաժողովը բա-
րեյաշող հետեւանքների դարձ և կանոնաւորէր
այն անհօրմալ դրութիւնը, որ տիրում է այժմ
գլխաւորապէս բանուրների և գործարանատէ-
րերի մէջ:

Այն ինչ այժմ հարկաւոր բանուրներ ան-
գործ են մնացել: Դրանց մի մասը վերադառ-
նում է գիւղերը, ուր կեանքի պայմանները
նոյնքան ծանր են, ինչպէս և քաղաքում: Շատ
տեղ ցանքեր չեն արված և, ինչպէս տեղե-
կանում ենք, Գուրեայի մի քանի մասերում
համարեա ուտելու հաց չը կայ: Շերամապա-
հութիւնը, որ այնքան զբաղացել է վերջին
տարիներում Դուրիայում և Մինգրէլիայում
և որը որոշ օգնութիւն էր գիւղացիների հա-
մար, այս տարի, շնորհիւ տիրող պայմանե-
րի, մասնավոր է անուշադրութեան: Եւ, ընդ-
հանրապէս, այդ դրութեան մէջ է ամբողջ
գիւղատնտեսութիւնը:

Եւ անընական մի երեկոյթ չէ, որ այսպիսի
հանգամանքներում աւագակութիւնների և կո-
ղապտեմների թիւը օր օրի վրա աւելանում է,
թէ շրջակայքում և թէ քաղաքում, ուր օրը
ցրեկով, ամենաբազմամարդ փողոցներում
յանդուգն կերպով կողոպտում են անցորդնե-
րին...

Մինչդեռ տեղացի բանուրները հեռանալու
վրա են քաղաքից, դրանց տեղ փողոցներում
յաճախ կարելի է պատահել «բօսանկներ»
ամբողջ խմբեր, որոնց թիւը ամեն մի նոր
շոգնաւոր գաղով աւելանում է:

Ներկայ անհանգիստ վայրկեաններում, երբ
հասարակութիւնը ամբողջապէս լարված հե-
տեւում է տիրող պայմանների փոփոխութեան,
ամեն մի չնչին երեկոյթ յուզում և ալիկոծում
է նրան: Այդ իսկ պատճառով շատ զգուշ պէտք
է լինել ամեն մի լուրից, որ կարող է յուզել
ժողովուրդը... Օրինակ, հէնց այն լուրը, որ
շատ յաճախ կերպով անա ըստի օր է բերա-
նից բերան է անցնում:

Պօսում են մի ինչ որ «սև հարկերակի» մա-
սին, որ իբրև կազմվում է Բաթումում: Բայց
հաղիւ թէ այդ «սև հարկերակի» սևահոգի ան-
դամները բարեկամաբար հող գտնեն այստեղ...
Այստեղ կարող են պաշտպանվել:

Ար. Մակարեան

ՀԱՅ ԿԻՆԸ ԵՒ ՀԱՅ ԼԵՋՈՒՆ

Վերջին ժամանակներս «Մշակի» և «Մուր-
ճի» էջերում կրկին անգամ յուզվեց մի որքան
հին, նոյնքան էլ նոր ու կենսական հարց,—
հայ կնոջ կուլտուրական—քաղաքակրթական
դերը ազգային—ժողովրդական ասպարէզում:
Մասնաւոր է անվում, գլխաւորապէս, «Կըթ-
ված» կանանց «ամուսնութիւն» և անպարտա-
ճանաչ վերաբերմունքը դէպի հայրենի ժողո-
վուրդը: Եւ դա, դժբաղդաբար, տխուր իրո-
դութիւն է՝ չը նայած, որ ամենից շատ

կրթութեանը պէտք է սպասել գիտակցական վերաբերմունքի դէպքի ազգային գոյութեան տարբերութիւնները։ Մենք կը ցանկանանք մի երկու խօսքով դարձնել շնորհիւ այն տխուր հանգամանքը, որ հայութիւնը, հայ մայրը մեղանշում, անբնական կերպով ըմբոստանում է մայրենի լեզուի դէմ, որը մայրական ընդմիջ կազմող ամենակէական տարրն է, թէ բարոյական և թէ նոյն իսկ օրգանական տեսակէտից։

Շատ ցանկալի է, որ մեր հայութիւնները մայրենի լեզուի վերաբերմամբ օրինակ վերցնէին իրանց վրացի ընդերքից։ Մենք հպարտութեամբ դրուատում ենք հայունու աշխատանքները, մաքրասիրութիւնը, տնտեսականութիւնը, խնայողութիւնը (խօսքը մօզայաւէր ու շուշլ ըմբոստ հայ կնոջ մասին չէ), տարիներով, տասնեակ տարիներով տարագիր ու մտաբանող ամուսնուն անաղարտ պատուով սպասելը, առնու. տեղ կառավարելը, երեսները մեծացնելը և հայ կնոջ այլ կանացի առաքելութիւնները։ Բայց ցաւով պէտք է խոստովանենք, որ մայրենի լեզուի, մայրենի գրագիրութեան, հայրենի երգերի վերաբերմամբ հայ կնոջ այն չէ, ինչ որ վրացուհիներն են։

Մեր հայութիւն մեր բաւական հարուստ և մշակված գրական լեզուն դեռ չէ դարձրել, այսպէս ասած, օրօրոցի և մանկանոցի լեզու, որից յետոյ միայն նա իւրաքանչիւր հայ սրտի համար կը դառնայ իսկապէս «ախորժ», ընտանի մայրենի լեզու։ Մեր կողմասահայ գրական լեզուն ախորժաւոր, քաղցրահնչուն մայրենի լեզու դարձնելու ստեղծագործական աշխատանքը բնականաբար պիտի ծանրանայ հայունու վրա. հայ մայրը հայ մանուկի միջոցով պէտք է հարմարի, ներութիւն մտցնէ մեր գրական լեզուի մէջ։ Հակառակ դէպքում՝ քանի որ մեր գրական լեզուն, որ իբրեւ եւրօպական քաղաքակրթութեան հաղորդիչ, կոչված է մեծ դեր խաղալու և գոցէ ոչ միայն. հայերիս համար,—ասում ենք, քանի որ այդ լեզուն կը շարունակէ մնալ հասակաւոր ժամանակի սովորովի լեզու, նա այն ներութիւնը չի ունենայ և մեր որդիներին համար արեւն—մարմին, օրգանական լեզու չի դառնայ։ Պօլսահայ գրական ձուլ ու ձկուն, ուրուսի լեզուն՝ իր բանաստեղծական գրաւնչութեամբ, իր ներութեամբ և գունագեղութեամբ՝ պօլսահայ ընտանիքին և այդ ընտանիքի մօտ ստեղծագործական աշխատանքին է պարտական։

Բացի դրանից՝ հայուն մայրը իր մայրական քաղցրահնչուն ձայնով իր մանկան աւանդին ու սրտին չէ մատակարարում մեր ազգային և մշակված ժողովրդական այնքան սրտատուգ երգերը, մեղօղիաները։—Ընդհանրապէս հայութիւնն այնքան էլ չէ հետաքրքրվում մայրենի գրականութեամբ և ամուսնով, նոյն իսկ գրական կօրփէյներով...

Անհայ կնոջ աչքի ընկնող պակասութիւնը, որի պատճառով երբեք աւելորդ չէ պատահելու, որ ներապագայ հայունու ինքնասիրութիւնը գրգռել, նրա գիտակցութեան ջահը վառել, նրա փափուկ ու քնքշող սիրտը զանգահարել...

Սալլիւմեան

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱՇՏՈՒԹԻՒՆ

(Ներկայացումներ Երևանում։—Աղբիւր՝ Երևանի ներկայացումները)

I

Դերասանական խումբը, որ տալիս էր Երեւանում ներկայացումներ, Նախկին տխուր դէպքերի պատճառով, դադարեցրեց իր գործունէութիւնը և վերադարձաւ Թիֆլիս։ Ներկայացումները անվարկութիւն էին գտել հասարակութեան կողմից և բաւական լաւ յաճախվում էին։ Ընդամենը տրված է ութ ներկայացում։

II

Աղբիւր՝ Երևանի ներկայացումները Թիֆլիսի արտիստական թատրոնում գրաւում են հանդիսականների մեծ բազմութիւն։ Վերջին ներկայացմանը, ելք տրվում էր Գէորգ Երեւանցիի «Առաջին» պիեսը, թատրոնը ծայրէ ի ծայր լինելէ։ Բօքսերու Աղբիւր՝ Երևանցի իր յարգողներին և երկրպագուներին իր ստեղծագործութեամբ կազմող և զգացված երգերով Գէորգի պիեսը իսկապէս բաւական թող և արհեստական պիես է, բայց շնորհիւ Աղբիւր՝ Երևանցիի բնորոշ խաղին, նա ոչ միայն ստացել էր փոքր ի շատէ իմաստ, այլ և դարձել է հասարակութեան համար ամենագրաւիչ պիեսներից մէկը, որը առանձին ձգողական նշանաւ ութիւն ունի հանդիսականների համար։

Սիւրող

III

Սև քաղաքում, նաւթարդիւնաբերողների լուսարանում, մայիսի 14-ին, սերողները, մասնակցութեամբ օր. Բնարիկի, ներկայացրին Ա. Արէշեանի «Մարդիկ ճարտարներ»։ Այս դրամայի բովանդակութեան հետ արդէն մօտ ծանօթ է հայ հասարակութիւնը։ Ինչ վերաբերում է խաղին, միմիայն շնորհակալութիւն կարելի է յայտնել յարգելի դերասանուհուն և պ. պ. սերողներին, որոնք միահամուռ ջանք ու ճիգ էին թափել բարեխիղճ կերպով ներկայացնելու դերերը։

Յով. Ս.

ՆԱՄԱԿ ՆՈՐ-ԲԱՅԱՆՑԻՑ

Մայիսի 11-ին

Մեզանում սովորաբար տարվայ առաջին ամիսներէն մէկում կայանում է «մեղանշների» ընդհանուր ժողով թէ նախահաշիւ կազմելու և թէ հողային հարկը բաժանելու համար։ Այդ ժողովը կայացաւ անցեալ մարտի 27-ին դռն-մայի դարձնելով, որտեղ աղմկայող ժողովուրդը, առանց հերթական հարցերով զբաղվելու, նախ և առաջ պահանջեց քաղաքային աւագ պ. Գ. Արծրունուց հաշիւառութիւն անցնել 3 տարիներին համար։ Շատ զաւրաւելից յետոյ այդ ժողովը (ընտրելով 10 հոգուց բաղկացած հաշիւառները) յետագից ժողովի շարունակութիւնը մինչև ապրիլ 24-ը հաշիւներն ստուգելու համար։ Քննելով 1902, 1093 և 1904 տարիներին մեղանշների հաշիւները, պ. պ. հաշիւառները ապրիլի 24-ին ներկայացրին երկրորդ ժողովին 33 կէտերից բաղկացած մի դեկլարում, որտեղ իբր թէ գտնվել են զանցառութիւններ կամ աւելորդ ծախսեր, որոնք իբր թէ արվել են առանց մեղանշների որոշման կամ «համախօսական վճար»։

Քաղաքային աւագը, լսելով հաշիւառներին զեկուցադրելը, առաջարկեց ժողովին թէ կամենաւ է բերանացի բացատրութիւն սխիլ իրանից թէ գրաւոր կերպով ստանալ ժողովականները խորհրդակցելով ցանկութիւն յայտնեցին 8 օրից յետոյ, այն է մայիսի 1-ին, գրաւոր բացատրութիւն ստանալ պ. աւագից։ Ժողովը ցրվեց։ Բայց մայիսի 1-ին մի կողմից ժողովականները օրինաւոր թիւ չը հաւաքվելու և միւս կողմից ստորագրող բացատրութիւնը մասամբ պատրաստ չը լինելու պատճառով կրկին ժողովի շարունակութիւնը նշանակվեց մայիսի 8-ին, դարձեալ 8 օր ընդմիջում։

Այդ վերջին ժողովում ևս խռովայող ամբողջ այն աստիճան լարված արամադրութիւն ունէր, որ հաշիւառութեան հէց առաջին կէտի բացատրութիւնը կարգալիս, սկսեց աղմուկ բարձրացնել, այնպէս լինելով—փոքրաւ, որի պատճառով անկարելի եղաւ մի որոշ եզրակացութեան գալ—գործի վերջաւորութեան յանգել։ Քանի որ արդէն չորրորդ ժողովը էր և ոչինչ չէր լինում, ուստի հարկային տեսչի, ժողովականների և աւագի համաձայնութեամբ որոշվեց ընտրել 3 հոգուց բաղկացած մի վերապատուելի յանձնաժողով, որը վերջ յիշված 10 հաշիւառներին և աւագի հետ միասին, նորից ընկնելով և ստուգելով մեղանշների 3 տարվայ հաշիւները, ներկայացնեն եկող ժողովին։ Մակայն ժողովականները մի գլուխ բղաւում էին՝ «ինչ որ մենք չենք որոշել ծախսերու, չենք ընդունի»։

Դրանից յետոյ այդ իսկ ժողովի առաջ Արծրունին կարգաց նախահաշիւը, որտեղ ի միջի այլոց դրված էր նաև գրադարանին օ. ժանդակելու հարցը, այն է գրադարանի տան տարեկան 75 ր. վարձը միայն։ Սակայն ժողովը մերժեց այդ առաջարկը, առարկելով, որ մեղանշները առանց այն էլ ծանրաբեռնված են և չեն օգտվում գրադարանից, ուստի քաղաքային վարչութիւնը թող վրցնէ իր վրա այդ ծախքը։ Բայց գիտէք, ընթերցող, որ ծանրութիւն է այդ.—1500 տուն ժողովուրդը չուզից վճարել 75 ր. տարեկան մի հիմնարկութեան, որը հասարակական մի դարգացնող ձեռնարկութիւն է. ուրիշ խօսքով ասենք մի ծուխ չուզեց տալ 5 կօպէկ ժողովը։ Դեպքում մի հիմնարկութիւն պահպանելու համար ձիջչ այն ժողովուրդական առածի պէս թէ՛ «Վաղարշ կորցրել է, չախլախի է ման գալիս»... Երբ ծանրաբեռնված էր աւելի շատ ծախքերով, ծանրաբեռնվեց նաև 5 կօպէկով և լուսաւորութեան դուռը մի փակէք ընթերցող հասարակութեան առաջ։

Այսպէս թէ այնպէս, չենք կասկածում, որ քաղաքային վարչութիւնը կը մտնէ իր նախահաշիւում այդ չ չին գումարը ապագայում, բայց չէ որ այսօրվայ նախահաշիւը վաղուց արդէն կազմված և ուղարկված է հաստատութեան։ Ուրեմն որտեղից վերցնել այդ դուռը

մարը առ այժմ, որպէս զի գրադարանը չը տուէր։ Դա էլ, շատերի կարծիքով, երիտասարդութեան պարտականութիւնն է, որ մի երկու ներկայացումով ապահովէ գրադարանի ծախքերը, իբրեւ իր սրտին մօտ մի հիմնարկութեան։

Կռան

ՆԱՄԱԿ ԱՐԴՈՒՆԻՑ

Մայիսի 10-ին

Աւագ երեքշաբթի օրը արդուինց Յակոբ Զաւարդեանը գնում է մօտակայ գիւղերը հաւ, ձու և գառ բերելու համար. հասնելով Կարթլ-ա գիւղը, վերցնում է իր հետ երկու ծանօթ թիւրքեր և երեքով միասին ուղևորվում են հարևան Աւան գիւղը զանազան բանի և ունեւոր։ Երկու թիւրքերը մի քիչ միայն յետոյ ասում են, որ իրանք կը գնան Կարթլա, իսկ Յակոբը թող վերջացնէ գործը և շտապէ իրանց հասնելու։ Մի ժամից յետոյ, ինչպէս ցոյց են տալիս վկանները, Յակոբը դուրս է գալիս գիւղից և մինչև Զաւարի երկրորդ օրը չէ վերադառնում գիւղից քաղաք։ Ազգականները գնում են Կարթլա, հարց ու փորձ անելուց յետոյ խնդրում են գիւղի տանուտէրից բանտարկել Յակոբի ընկերներին, որոնք նոյն օրը փախչում են գիւղից։ 20 օրից յետոյ կորածի դիակը գտնում են ձորոխի ափին. բանից դուրս է գալիս, որ մինչև Յակոբի ազգականներին Կարթլա գնալը, դիակը թաղած են եղել հողի մէջ, իսկ յետոյ վախճանով թէ ազգականները կարող են գտնել դիակը՝ դռնցում են ձորոխի մէջ։ Մօտ օրերս դիակը բերին քաղաք և յանձնեցին հողին։ Հանգուցեալը ամուսնացել էր այս տարի բարեկենդանին։

Այս դէպքը շատ զայրացրեց ամբողջ ազգաւորականութեանը, մասնաւոր թիւրքերին. մի քանի էֆէնդիներ համախօսական կազմեցին և երկու հարկը ստորագրութիւններով ուղարկեցին Մուղղուրի բոլոր գիւղերը, որով խնդրում են թիւրք գիւղացիներին չը պատսպարել չարագործներին, բռնել և յանձնել կառավարութեանը։

Էֆէնդիներին այս վարմունքը և անկեղծ զայրոյթը մեծ միջթարութիւն պատճառեց հայերին և համոզեց, որ մեր զբաղ թիւրքերը սրտանց ուղղում են համբաւիս ապրել հայերի հետ։

Մուղղուրի մի քանի ազգիցիկ աղաները ձեռք են առնում միջոցներ չարագործներին գտնելու համար։

Գ. Դեմիրչեան

ՆԱՄԱԿ ՆՈՒՇՈՒՑ

Մայիսի 4-ին

Գուցէ ոչ մի քաղաքում անօնիմ նամակագրութիւնը այնպիսի լայն ծաւալ չէ ստացել, ինչպէս մեր պատմական Շուշում։ Նամակներ լիքը ստուգելուներով, վայրահաշուութիւններով ու զանազան փողոցային հայտնաբերումով ստացվում են ամեն օր սրա կամ նրա հասցեով։ Մակայն լինում են և նամակներ, որոնց մէջ հեղինակը իբր թէ բարի խորհուրդներ է տալիս։ Օրինակ, եթէ մէկը մօտ յարաբերութեան մէջ է միւսի հետ, եթէ նրանք բարեկամներ են,— ասա առաջ են գալիս զանազան բարոյագէտներ, որոնք խորհուրդ են տալիս դրանից մէկին հեռու մնալ միւսից և, ի հարկէ, զանազան պատճառաբանութիւններ բերում։ Պատահում է նաև, որ նամակագիրը իր հօր պաշտպանութիւնն է առաջարկում որ և է օրիորդի և զուգահեռում այն ինչի կամ այն ինչի հետ չը խօսել, յարաբերութիւն չունենալ, և զուգահեռաբար առաջարկում իր այրվող, պալկացող սիրտը, իսկ վերջում սպասեալիքներ կարգում, որ եթէ իր այդ գրածները նկատի չառնվին, նա—այդ բարոյական, հօր պարծն կարող է սպանել օրիորդին կամ հակառակորդին և այն և այլն։

Մենք ձանձրանում ենք օրինակներ բերելուց, այնքան նրանք ընդհանրացած են։ Եւ չը նայած նրան, որ ոչ մի ուշադրութիւն չէ դարձնվում այդպիսի նամակներին, որ նրանք պատուովում և դէն են գցվում և շատ դէպքերում ծանաչելով նամակի ոճից հեղինակին, վերջինիս վրա կուշա-կուշա ծիծաղում են, այնու ամենայնիւ անօնիմ նամակները մեզ մօտ վերջ ու սահման չունեն։

Բայց, դժբաղդաբար, պատահում են և փոքր ի շատ է կրթված մարդիկ (գոնէ այդ պէտք է երգականի նամակի ոճից), որոնք բարոյականութեան վարպետի տակ ամեն տեսակ զրպարտութիւններ է, որ ուղղում են սրա ու նրա հասցէին և այդպիսով շատ դէպքերում ընտանեկան փոթորիկներ պատճառ դառնում։

Հասկացող մարդիկ, չկրկնում ենք, այդպիսի նամակները, ստանալուն պէս, պատուում և դէն են գցում։ Բայց, դժբաղդաբար, լինում են մարդիկ, որոնք խոշոր նշանակութիւն տալով նրանց, խորհում, բարկանում և մտաւորանշութիւններին մէջ են ընկնում։

Ինչո՞ւ են նամակագիրները այդպիսի հետեւանքներ պատճառ դառնում։ Եւ միթէ՞ իրանց կարծիքով, մի քանի նամակներով կարող են մէկին իր ուղղութիւնից շեղել, կամ վերջապէս այդպիսի ճանապարհներով իրանց ստոր նպատակներին հասնել։ Եթէ մէկը որ և է խորհուրդ ունի տալու կամ, մեր բարին ցանկանալով, ուղղում է նախազգուշացնել, կարող է անձամբ ներկայանալ և ինչ հարկաւոր է ասել և ոչ թէ ցանկապատի տակից։

Եւ դեռ ասում են. «մենք կուտուրական աղբ ենք»... Ո՛չ. մենք չափազանց տգէտ ու տհաս ենք և շատ հեռու կուտուրական լինելուց։ Եւ դրան ապացոյց կարող է ծառայել նաև մեր վերջ յիշածը։

Կովկասեան

ՆԱՄԱԿ ԳԱՆՁԱԿԻ ԳԱՒԱՌԻՑ

Բանանց գիւղ, ապրիլի 29-ին

Դանձակի գաւառի գիւղական համայնքներից մի քանիսը, օգտվելով այն բարեհաճ, բարեացակամ արամադրութիւնից, որը ցոյց է տալիս այժմ Կովկասի բարձր վարչութիւնը, յանձնի փոխարքայի ու նրա օգնականների, դէպի տեղական ազգաբնակչութիւնը, որոշել են գիւմիլ պ. փոխարքային մի շարք խնդրագրերով իրանց արդի դրութեան թիւթկացման մասին։ Մեր գաւառի գիւղական ժողովուրդը դրութիւնը, ընդհանուր առմամբ շատ անախաճնելի է, նոյնն է, ինչպէս որ է նա ամենուրեք Կովկասում, ինչպէս որ է այն լայնածաւալ երկրում, որի մի մասն է կազմում Կովկասը... Գիւղական ամբողջ խաւար է, խեղճ, չքաւոր, անկուտուրական, կուտուրապէս շատ քիչ զարգացած, ծանրաբեռնված անտանելի հոգսերով, հարկերով, միշտ ենթակայ ամեն տեսակ կամապականութիւնների, ապօրինութիւնների, որոնց երկար, անվերջ շարքեր սկսվում է գիւղական գլխից, չօղուել, գործողութիւնից» ու գնում է հեռու, շատ հեռու...

Դանձակի գաւառի ու նրա նահանգի գիւղական ժողովուրդը այնքան է ահաբեկված տարիներ ընթացքում ստորին ու ոչ-ստորին պաշտօնեաներից, որ այժմ, փետրվարի 18-ի ազատարար հրովարտակից ու Կովկասի փոխարքայի ազատութեան դուռը բաց անող կոչից յետոյ անգամ, չէ յանդգնում իր ցաւերի ու կարիքների մասին խօսել աղբու լեզուով, յայտնի դարձնել այդ ցաւերը նրանց, որոնք նրան պատճառաւ իրաւունք են օտել այդ անելու, որոնք բացարձակ խոստանում են նրան սրտացաւ վերաբերում նրա բազմաթիւ կարիքներին, ցաւերին... Թէ ինչքան է ճշնշված, ահաբեկված մեր կողմերի գիւղացին, կարելի է երևակայել այս հետեւեալ փաստերից։ Տողերիս գրողին պատահել է տեսնել գիւղացիներին գլխաւազ կանգնած... Գնահանգապէս ձիւ մօտ. շատերին դա անհատաւորի կը թաւա։ Նահանգապետը եկել էր գիւղը. գիւղացիներն այս ու այնտեղ խմբված խորին անխաժութեամբ ու պատկառանքով նայում էին այն տանը, որտեղ իջել էր նահանգի գլխաւոր իշխանաւորը։ Տան գոմի մօտ կանգնած էր մի փոքրիկ խումբ. յանկարծ գոմի դուռը բանվեց ու այնտեղից լսվեց գլխի ձայնը՝ «Առա, շաւ աղէք, փախէք, հեռէք, զրաղ արէք էդ տեղից, գրեւորուրէ ձին տանում եմ շուր տամ. ձեզ կը տեսնի ու խառնի կորէք հրետին»։ Այդ փոքրիկ գոմից դուրս եկող գլխի ետեւում երևաց ձիւ, հպարտ քայլուածքով ու խորտու դէմքով. գիւղացիները մեքենաբար վրցրին գլխաւորները, այնքան զօրաւոր էր «գրեւորուրէ ձի» բառերի ազգաբնակչութիւնը...

Ստ. Տէր-Աւետիսեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԻՐ

Կովկասի փոխարքայի դիւանը պահանջել է նահանգապետներից և շրջանների կառավարիչներից մանրամասն տեղեկութիւններ, բոլոր գաւառներին ու շրջաններին համար առանձին-առանձին։ Այդ տեղեկութիւնները վերաբերում են այն ծախքերին, որոնք լրացվում են գիւղական տուրքերով՝ ինչպէս օրինակ ճանապարհների, կամուրջների շինելու, մի քանի տեղերում գիւղական բուժարաններ, դպրոցներ, ձիեր պաշտօնեաների փոխարքայութեան նպատակով պահելու համար և այլն։

նորոգելու և այդ ծախքերի ու տուրքերի չափերի մասին: Այդ տեղեկություններն անհրաժեշտ են թէ՛ նոր տուրքեր նշանակելու, թէ՛ օրավար հոդից տուրք առնելու և թէ՛ իրենց հաշվապահ գեներալները ներմուծելուն վերաբերող աշխատանքներին համար:

Անցեալ օրը, ցերեկվայ ժամը 1-ին Քիֆ-ի իր Դոմայի դահլիճում կայացաւ ուսարաւայի ծառայողները խորհրդակցութիւնը: Ընդհանուր կարծիքն այն էր, որ անկարելի է նախ կարգադրելու և տրամադրութեան տակ զբաղմունքները շարունակել: պէտք է զսպել Նախիջևանի գաւառի արեւմտ ղեկավարները: Վճռվեց դիմել քաղաքագլխին և խնդրել, որ իրանից կախված միջոցները գործադրէ: Գաղաքագլուի նրանց խորհուրդը առեց հանգստանալ և զբաղմունքները շարունակել:

Կերակի, մայիսի 15-ին, առաւօտեան ժամը 11-ին, Քիֆի թաղաքային տան դահլիճում, նախագահութեամբ Ն. Տիգրանեանի կայացաւ Քիֆի շայոյ Բարեգործական ընկերութեան ընդհանուր ժողովը՝ շարունակութիւնը: Ժողովը նախ ոտի կանգնելով յարգեց Նախիջևանի աղետալի դէպքերի զոհերի յիշատակը, ապա սկսեց ընտելեան առնել օրակարգի առաջին հարցը, այն է՝ ներկայ կանոնադրութեան փոխելու և նրա փոխարէն նախկին Կովկասեան շայոյ Բարեգործական ընկերութեան կանոնադրութեան ամբողջական վերականգնելու հարցը: Այս խնդրի մասին թեր և դէմ խօսեցող յետոյ, ժողովը միաձայն որոշեց. Բազուի և Նախիջևանի աղետալի դէպքերից յետոյ, աչքի առաջ ունենալով, որ Կովկասում ներկայումս կանգնած է գոյրի ապահովութիւնը չը կայ, աւելորդ է նոր խնդրագրով դիմել կանոնադրութեան կանոնադրութիւններին փոփոխման մասին: Ապա ժողովը անցաւ ընտրութիւններին. գաղտնի ընտրութեամբ վարչութեան անդամներ ընտրվեցին՝ պ. պ. Ն. Տիգրանեան, Յ. Չախմախանեան և Յ. Ստեփանեան, փոխանգամբի՝ պ. Կ. Շիրինեան, տրի. Անանիանց և տ. Նուստֆաբեան, վերահսկող յանձնաժողովի անդամներ պ. պ. Մ. Կայալեան, Լ. Տէր-Մինասեան և Բ. Առաքելեան:

«СЫНЬ ОТЕЧЕСТВА» լրագրերը հաղորդում է, որ Բազուի կոտորածի ժամանակ սպանված Բալաբէկ Լալայեանի Պողոս և Բողա անունով անչափահաս որդիները կողմից երդուեալ-հաւատարմաբար Զարուհինյ կառավարիչ սենատի քաղաքացիական վճռաջինը դեպարտամենտում սկսած է եղել քաղաքացիական գործ Բազուի նահանգապետ Նախիջևանի դէմ, պահանջելով նրանից 50 հազար ռուբլի վնաս:

Կօրէկօի յանձնաժողովը մտադրութիւն ունէր ենթադրել ըրոր այլազգիների մամուլը ցնդուեալ կանոնադրութեան: Կովկասեան Փոխարքան, ինչպէս լսել է «СЫНЬ ОТЕЧЕСТВА» լրագրերը միացաւ յանձնաժողովի այդ մտադրութեան՝ հայոց և վրաց մամուլի վերաբերմամբ: Ներքին գործերի մինիստրը համաձայնեց Փոխարքայի կարծիքին հետ, բայց անհրաժեշտ է համարում բացատրութիւն կազմել միայն այն մամուլին համար, որ հրատարակվում է հրէաների լեզուով և ենթարկել նրան առանձին կանոններին:

Քիֆի թաղաքային Քրէստի թղթակիցը գրում է, որ զխաւոր երկաթուղիական արհեստանոցներում նկատվում է ազգային խտրութիւն: Այդ պատճառով արհեստանոցները պահպանող պահապանները զինաւորված են վերստովանելով:

Նոյն լրագրերն հաղորդում են Բոստով Դօնի վրա քաղաքից, որ այնտեղ գտնվել է անբարոյականութեան որը, ուր խաբէութեամբ տարվում էին զպրոցները աշակերտներին:

Ստացանք հետեւեալ նոր հրատարակութիւնները. 1) Սիւն Գիւլիպոսեանց—«Հնից—Նորից», ոտանաւորներ, Պաղարշապատ, 1905, 1րդ 232 էր., դրնը 80 կօպէկ, 2) Բ. Ա. Պրոտովսկի—«Զընալ Մարտ», հրատարակութիւն տրիկին Չաբելի («Մեր էփօսագիտի գրադարան», № 8) Պետերբուրգ, 18 էր., դրնը 5 կօպէկ:

Բաթումում մայիսի 15-ին սպանում են Պոլիանեանի փակ գործարարի մօտ Խօշաշաշ. Մանուէլ էֆէնդուն: Յայտնի է թէ իմ կարգադրութիւնով, սպանված պատկա-

ռելի ծերունուն տարել են Ուշար ֆանատիկոս գեղը, ամբողջին գրգռելու համար: Յետոյ գրգռելու և դնում են Բաթումի մզկիթում: Հայերից մի մեծ խումբ և քահանաներ գնում են յարգելով մօլլայի համար հոգեհանգիստ կատարելու, բայց այդ ժամանակ չարամիտները նետած են լինում ժողովրդի ոտերի տակ մի քանի պայթուցիկ անվնաս իրեր: Պայթիւնից ըրորը շփոթվում են և դէնքերն են պատրաստում և անմիջապէս խառնութեանը փակում: Սպանված ծերունու երկու որդիներն էլ միաբերան պնդում են, որ հայերը շատ սիրում էին իրանց հօրը և նրան սպանել են իրանց թշնամի ազգականները: Չարամիտ մարդիկ լուրեր են տարածում, որ մօլլային սպանել են հայերը և այն էլ Մանթաշեանի գործարարի մօտ, այն ինչ մօլլան անա 15 տարուց աւելի է Բաթում էր և շատ սիրված էր հայերից: Նրան սպանել են Մոլլիանեանի գործարարի մօտ, որ երկար ժամանակ փակ է և մարդ չը կայ մէջը:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՏԵՐԱՋՍԻ ԵՈՒՐԸ

Խօսակցութիւն ծովային միմիստրեան կառավարիչ գեներալ-ադմիրալ Ալեքանդր Բոս: «ԲԵՏ» լրագրի թղթակիցը Խօսակցութեան ժամանակ Ալեքանդր Բոս, հարցրեց.

—Շուտով կարելի է սպասել ծովային ճակատամարտի:

—Ոչ թէ կարելի է, այլ պէտք է: Եւրոպացիները երեւ առանց կուռի չեն թողնի ուսանելու մասին Վլադիվոստոկ, որը տեղի կունենայ ամենակարճ ժամանակվայ ընթացքում: Թէպէտ, սակայն, ես պէտք է աւելացնեմ, որ մեզ ոչինչ յայտնի չէ Բոսի միջնակուրդաւորութիւններին մասին: Այդ կողմից Թաւաւոր Կայսրը գործունէութեան կատարեալ օգնական է տուել նրան: Շատ կարելի է Բոսի միջնակուրդ չի էլ գնալ Վլադիվոստոկ, այլ ուղղակի առիթներ կորցնէ հանդիպելու թընամու էսկադրայի հետ: Եւ, ընդհակառակը, կարող է պատահել, որ նա կը գերադասէ իր յետակէտն ընտրել Վլադիվոստոկ: Առհասարակ, ես չեմ կարող ոչինչ որոշ բան ասել մեր էսկադրայի առաջիկայ գործունէութեան մասին:

—Ձեզ պէտք է արեւօք վախենալ, որ եւրոպացիները դիտմամբ կը թողնեն նրան մտնել Վլադիվոստոկ, որպէս զի մի շարք պահանջներ յարձակումներ գործեն, և ապա, երբ վերջինները աշխուրդներ կունենան, փակել նրան այդ նաւահանգստում: Այդպիսի ենթադրութիւն յաճախ անում էին արտասահմանեան ծովային հեղինակութիւն ունեցող անձինք:

Ի պատասխան դրա, Ալեքանդր Բոս.

—Ձե, ասաց նա, պօրտ-արտուրեան էպօպէան չի կրնիլ: Եւ վերջապէս Բոսի միջնակուրդն այնպիսի ծովային չէ, որ փակել տայ իրան նաւահանգստում: Եւ անպատրաստ չեն գտնի նրան եւրոպացիները: Ներկայ դէպքում կարելի է համարեա հաւատացած լինել, որ Բոսի միջնակուրդ նրա համար չի բերի մեր էսկադրան Վլադիվոստոկ, եթէ այդ տեղի կուռնենայ, որ այնտեղ դափնիները վրա հանգչի և սպասէ եւրոպացիների երկաւում: Նա ինքն, երկու, առիթներ կը պտեն հանդիպելու նրանց հետ և կաշխատէ, էսկադրային ծանր ճակատամարտից յետոյ, դուրս կորդի նրանց ձեռքերից տիրապետութիւնը ծովի վրա:

—Բայց ինչպէս կաշխատի նրան կուռ կոչիլ եւրոպացիներին, եթէ նրանք իրանց չեն ցանկանայ այդ: Մինչև այժմ եւրոպացիները շատ զգոյշ են եղել: Հագել թէ նրանք վտանգի ենթարկւն ամբողջ պատերազմի ելը:

—Նրանք ստիպված կը լինեն այդ բանն աւելու: Մեր էսկադրայի հրամանատարի տրամադրութեան տակ շատ միջոցներ կան՝ ստիպելու համար նրանց պատերազմի: Օրինակ, Բաւալեան է, որ Բոսի միջնակուրդն ավելորդ է եւրոպական ուր և է նաւահանգստ, որ ծովապետ Տօգօի էսկադրան ստիպված լինի դալ նրա պաշտպանութեան համար: Նշանաւոր է ճակատամարտի ելը: Եւ այդ, ես կարծում եմ, տեղի կունենայ առաջիկայում:

ՊԱՐՄԻՃ ԵՄԷԻ ԶԱՆԱՊԱՐՆՈՐԴՈՒԹԻՒՆԸ

Ռաշտ, մայիսի 12-ին

Նորին Կայսերական Մեծութիւն Մուղա-Յէր-Էդիլի Շահ ամսին 7-ին արքայական շքանշանով ժամանեց քաղաք: Դեռ ապրիլի 20-ից քաղաքի ազգաբնակչութիւնը եռանդուն խնամքով պատրաստութիւններ էր տեսնում որքան կարելի է շքեղ ընդունելութիւն ցոյց

տալ իր վերահաւանին. այնպէս որ մինչև մայիսի 6-ը ամեն պատրաստութիւններ տեսնված, վերջապէս էին: Դրեթէ ամբողջ քաղաքը զարդարված էր հազարաւոր դրօշակներով և ծաղիկներով. գլխաւոր փողոցները, որտեղից պիտի անցնէր արքայական գնացքը՝ զարդարված էին վարդերով, ծաղիկներով, մետաքսեայ գորգերով, թաւիշներով, նկարներով և բազմաթիւ լապտերներով: Սկսած «Թէհրանայ կամըշից» մինչև «Մարգի-մէյդան» բուլվարը, բացի վերագրեալ զարդարանքից, իւրաքանչիւր խանութ և առն ունէր իր փողերի, չէր օտտերից պատրաստած սրբուն կամ մարներ. իսկ մէջ ընդ մէջ 12 հատ յաղթական խորխոր կամարներ, որոնցից երկուսը պատկանում էին հայերին. մէկը մասնաւոր իսկ միւսը համայնական:

Դեռ 6-ի առաւօտեց սկսած էր քաղաքը մանկ հետզհետէ Շահի բեռնակիր կարավանը, բեռնաւորված զանազան իրեղէններով, վրաններով, խոհանոցի իրերով: 7-ի առաւօտը այդ հոսանքը կրկնապատկեց մինչև ժամի տասը, երբ թնդանթի առաջին հարուածը աղաքաբեց Շահի մօտեցաւ: Անմիջապէս երկաց առաջնեց կազակ ձիաւորների շարքը, ապա հետևում կարմազգեստ ֆարաշները և յետոյ արքայական «չաթրները»՝ խալաւաճաւուր, ֆանտաստիկ հագուստներով, թուր 12, որոնք շրջապատել էին Շահի կառքը: Կառքի յամբ թաւալումը միջոց էր տալիս Շահին լաւ տեսնելու: Նա հազնուած էր շատ համեստ, ոչ մի շքանշան չէր զարդարում նրա կուրծքը: Միայն շահական խորխոր «ճիլկան», շրջապատված ընկողպաշափ աղամաններով՝ զրգացնել էր տալիս իրանի միապետի ոյժը: Նրա դէմքը բարի, հեղ ու խոնարհ էր:

Արքայական կառքից յետոյ անցաւ և մի ուրիշ կառք, որի մէջ նստած էին երկու փղերիկ արքայազուներ, մէկը Շահի փղեր ուղիղ, իսկ միւսը Ն. Վ. գահաժառանգ իշխանի որդին (ապագայ գահաժառանգը): Շահը դրանց տանում է Եւրօպա ուսման տալու նպատակով: Արքայազուները կառքին զուգնեցին էր և էյրի-Դօլայ Սաւոր-Աղաւի կառքը, ապա մի շարք կառքեր, որոնք կազմում էին Շահի շքանշանը:

Դեռ «Թէհրանայ-Կամըշի» մօտ Շահը ընդունել էր տեղական քահանայից մատուցված աղ ու հացը, իսկ այստեղ, դպրոցի բազի առջև բարեհաճեց ընդունել աշակերտ-աշակերտներին ծառայող մի ծաղիկայ փունջ:

Երկու օր այստեղ մնալով՝ ամսին 9-ին մեկնեց դէպի Էնզելի, որտեղ կը մնայ հինգ օր. ապա կը մեկնէ դէպի Եւրօպա: Ձը գիտեմ որքան ճիշդ է, բայց ասում են, որ Շահը չափազանց դայրացի է բազուցիներին և այս անգամ չը պիտի բախտաւորացնէ նոցա իր ներկայութեամբ. պատճառը վերաբերում է վերջին քառմեկի դէպքերին...

Մ. Տէր-Յակովբեանց

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

16 մայիսի

ԳՆԷՆԱ, 15 մայիսի: Կրեմլական ժողովը հետեւեալ որոշումը կայացրեց. «Ամենախոր ցաւակցութիւն արտայայտելով պետութիւններին վճռի առիթով, որով մերժել են սրբագործի մեր նախկին որոշումը և պնդելով նախկին յայտնած պահանջը Յունաստանի հետ միանալու մասին, ժողովը խորում է Կրեմլին խնամակալ պետութիւններին ի կատար ածել իրանց քաղաքական հարցը և վերջ ընել կրեմլացիների յուզումներին և տանջանքներին, ժողովը հրաւեր է կարդում կրեմլացիներին զենքեր վաշը դնել, իրան վերապահելով իւրաւունքը՝ ներառել նստաշը մեր ընթացքում նոր ժողով հրաւերելու ազգային հարցը քննելու համար կարգը վերականգնելուց յետոյ, իսկ այժմ ժողովը ժամանակաւորապէս դադարեցնում է իր նիստերը:

ՊԱՐԻՉ, 16 մայիսի: Անգլիական ծովային օֆիցերները, որոնք այս օրերս կայցելին Ֆրանսիական էսկադրան, կը հրաւերեն Պարիզ յատուկ կազմված հանդէսներին:

ՆԻԻ. ԵՈՐԴ, 16 մայիսի: Չլիական մի կրէյսէր Զիլի հարաւային ծովափին կաւա ժայռի և ընկղմվեց: Նաւապետն անձնասպան եղաւ:

ՄԱՐԻՐԻ, 15 մայիսի: Միլիւկան մերձիմա է: ՀՅՈՒԿՅՈՒՆ, 15 մայիսի: Այստեղի բրտա-նական էսկադրան հրաման ստացաւ դէպի հիւսիս գնալ: Նա կը մեկնի վարդ: Մինչպէս պուրում եղած անգլիական նաւերը կը դնան զօրացնելու Հօնգիւսի էսկադրան:

ՄԱԳԱՐՈՐ, 16 մայիսի: Մարօկիւում, տե-

ղական ցեղերի մէջ սաստիկ յուզումները պատճառով, Շխաւայի և Մարաբէշի միջև եղած խառնուրդ ուղին վտանգաւոր է: Ամեն կողմ բռնութիւններ և աւաղակութիւններ են: ԲՕՐԻՍՕԳԼԵՐՈՎ, 16 մայիսի: Մալաեա Դրեմանովկա գիւղում հրեանք ոչնչացրեց մօտ 100 տուն: Հրկիզականը զարհուրելի թշուառութեան մէջ են. աղերսում են բարերար օգնութիւն: Խնդրում են նուէրներ ուղարկել Բօրիսօգլեբսկ, քաղաքագլխի պաշտօնակատարին:

ԿՕՎՆԱ, 16 մայիսի: Այրվեց Եանօլօ մեծ աւանի մեծ մասը: Այրվեցին պետական օդավաճառանոցը և պօստային գրասենեակը:

17 մայիսի

ԼՕՆԴՕՆ, 16 մայիսի: Եւրոպայից եկած հետազոտները հաստատում են, որ Բօֆետովիսկին անաշողութիւն է կրել: Եւրոպական 3 կրէյսէր և 12 հակաաւանանաւեր կամ ընկղմված են կամ շարքից դուրս են բերված: Ճակատամարտը շարունակվում է:—Հազարի չափ անգործ բանուրներ առաւօտեան հաւաքվեցին Լէյստէրում և ուղևորված աղաղակներով վրձնեցին գնալ Լօնդօն՝ վրա թաղաւորին պատգամաւորութիւն ներկայացնելու համար. թաղաւորին նամակ է ուղարկված շատ յարգական արտայայտութիւններով:

ՎԱՇԻՆԴՏՕՆ, 15 մայիսի: Կոմս Կասսինին գլխաւորական միւնիստր Տաֆտի առաջիկայ այցելութեան առիթով Եւրօպիա և Ֆիլիպպեան կղզիները՝ մասնաւոր ձևով յայտնեց նախագահին, որ այդ այցելութիւնը եւրոպացիները և ուսանողներ, նոյնպէս և եւրօպական պետութիւնները համարելու են համակրանք դէպի Եւրօպիան: Նախագահը աղջկայ մասնակցութիւնն այդ այցելութեանը նրան կը տայ քաղաքական նշանակութիւն: Նախագահը յայտնեց, որ օրերորդ Բուլլէյտը ոչ մի քաղաքական դեր չունի, այդ պատճառով նրա և ուրիշ կանանց ներկայութիւնը ոչ մի նշանակութիւն չունի:

ՎԱՇԻՆԴՏՕՆ, 16 մայիսի: Եւրօպական դեսպան Տակահիրան երէկ Սպիտակ տանն էր, բայց Բուլլէյտին այնտեղ չը գտաւ: Ասում են, որ Տակահիրան մասնաւոր հետազոտ է ստացել, որ ճակատամարտը դեռ ևս եւրօպացիները օգտին է գնում: Միւսային շրջաններում ենթադրում են, որ Տօգօն լայն կերպով կօգտվի ակնանաւերով, որպէս զի ուսանական էսկադրային ամենամեծ մասն հասցնէ ամենաքիչ կորուստ ունենալով:

ՊԱՐԻՉ, 16 մայիսի: Երկրագործութեան, առեւտրի և դպրութեան մինիստրները պաշտօնապէս կայցելին Լիւտիլի ցուցահանդէսը:

ԱՐՄԱՒԻՐ, 16 մայիսի: Գուկիկիլ կայաքանում, Վլադիկովկազի երկաթուղու վրա, հիւրանոցում անձնասպան եղաւ գեներալ Կօվալեովը, որ մեղադրվում էր բժիշկ Զարուսովին տանջանքի ենթարկելու:

17 մայիսի

ՊԱՐԻՉ, 17 մայիսի: Եւրօպական 5 մարտանաւեր այս առաւօտ նկատվեցին քաղաքի ծովում, Կորբէթիօրեան կղզիների դիմացը, դիմելով դէպի հիւսիս:—Անգլիական շոգենաւը մայիսի 14-ին տեսել է Բաշի նեղուցից 120 մղոն դէպի արեւմուտք երկու փոխարքանաւեր: Զինական մի մարտանաւ շրջեց Սաղի կղզիները, չը հանդիպելով այնտեղ Բօսի միջնակուրդ էսկադրայի ոչ մի նաւ, և դնաց Բարբէն կղզիների մօտ, ուր նրան կանգնեցրեց ուսանական «Դինգը» կրէյսէրը: Կրէյսէրի հետ սովորական ողջոյններ փոխանակելով, չինական նաւը վերադարձաւ Սաղոնի ծովածոցը:

ՏՕԿԻՕ, 16 մայիսի: Ինչպէս երևում է ուսանները կարծի են, որ եւրօպացիների քաղաքի եղել են Պէսկադորեան կղզիները, որովհետեւ նրանք խիստ խուսափում էին այդ կղզիների մօտ գնալ նայ կնալ, անագին շրջան անելով՝ նախ քան Յունիսմ ջանքը մտնելը: Ռուսական երկու մարտանաւեր, որոնք, ինչպէս ենթադրում են, մտնում են Վլադիվոստոկեան էսկադրայի կազմի մէջ, մայիսի 15-ին նկատվել են Տէշիվօ գաւառի շրջակայքում, Հօկիւրիւզօ կղզուց դէպի հիւսիս:

ԵԱՆԳՆԱ, 16 մայիսի: Վուզնեւում կանգնած ուսանական փոխարքանաւերը այսօր դրօշակներն իջեցրին: Նկատվել են «Դինգը» և «Բիւն» շոգենաւերը, որոնք լողում են Շանգհայի մօտերը: Միացած նաւերի մասին ոչինչ յայտնի չէ:

ԼՕՆԴՕՆ, 16 մայիսի: Եւրօպական միսիստի հետեւեալ պաշտօնական հաղորդագրութիւնն ստացաւ Տօկիօյց մայիսի 16-ին, կէսօրից յետոյ ժամը 4¹/₂-ին ուղարկված: Տօգօի առաջին գեներալը. «Մայիսի 14-ին, հինգ օր լուր

